# ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՂԵՏ, Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ:

Ճառագայթային հնարավոր աղետի վտանգի մասին որևէ հասանելի միջոցով ծանուցում ստանալուց հետո խորհուրդ է տրվում հետեւել ստորեւ նշված գործողություններին.

1. Մտնել փակ շինություն
2. Առանց թույլտվության չլքել շինությունները
3. Հետևել տեղեկատվության աղբյուրներին






## ՄՏՆԵԼ ՓԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ



1. Եթե ճառագայթային արտակարգ իրավիճակի ժամանակ գտնվում եք դրսում, անհապաղ հարկավոր է պաշտպանել վերին շնչառական ուղիները հասանելի անհատական պաշտպանիչ միջոցներով, ռեսպիրատորներով, խոնավ բամբակյա շղարշով, վիրակապով: Դրանց բացակայության պարագայում՝ ձեռքի տակ հասանելի միջոցներով, ինչպիսիք են թաշկինակները, շարֆերը կամ գործվածքային այլ միջոցներ:



2. Աշխատեք չքայլել խոտածածկ մակերեսներով, ճամպրուկներ և այլ իրեր չդնել գետնին, չնստել գետնին, չդիպչել բացօթյա տարածքում գտնվող առարկաների:



3. Շտապեք պատսպարվել պաշտպանական կառույցներում. գրասենյակային շենքեր, վարչական շենքեր, բնակարաններ, որտեղ ռադիոծածկույթն հասանելի է: Գնացեք շենքի ներսի հատված կամ նկուղ՝ դռներից և պատուհաններից հեռու:



4. Եթե դուք գտնվում եք մեքենայի, ավտոբուսի կամ այլ տրանսպորտային միջոցի մեջ ճառագայթային արտակարգ իրավիճակի ժամանակ, անմիջապես մտեք մոտակա շենք: Մեքենաները չեն հանդիսանում լավ պաշտպանության օբյեկտներ ռադիոակտիվ նյութերից:



5. Եթե դուք ընտանի կենդանիներ ունեք հնարավորության դեպքում ձեր հետ ներս տարեք:

## ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՉԼՔԵԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



1. Ապաստարան հասնելուն պես անհրաժեշտ է հանել բոլոր վերնազգեստները և կոշիկները: Դրանք դնել պոլիէթիլենային տոպրակի մեջ և անմիջապես լոգանք ընդունել կամ հնարավորության դեպքում մարմնի բաց հատվածները սրբել խոնավ անձեռոցիկով:



2. Փակել բոլոր պատուհաններն ու դռները, անջատել օդափոխությունը և միացնել հեռուստացույցը կամ ռադիոն: Առնվազն 24 ժամ ներսում մնալը կարող է ձեզ պաշտպանել այնքան ժամանակ, քանի դեռ տարածքը լքելը կդառնա անվտանգ:

3. Հնարավորության դեպքում պահեստավորեք մաքուր խմելու ջուր 2-3 օրվա համար՝ մեկ անձի համար առնվազն 2 լիտր ծավալով, փակ տարայի մեջ: Տեղավորեք առկա/հասանելի սնունդը պոլիէթիլենային տոպրակների կամ սննդի համար նորից փակվող տարաների մեջ և դրեք սառնարանում կամ պահարանում:

4. Ապաստարանը մաքրեք բացառապես խոնավ միջոցներով, ներառյալ սնունդ պատրաստելուց և անմիջապես ուտելուց առաջ:

### ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՅՈԴԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ:

Ամենաարդյունավետ միջոցը ճառագայթային աղետի ժամանակ կայուն յոդ պարունակող դեղամիջոցների ընդունումն է, ինչպիսին է կալիումի յոդիդը: Աղետի մասին ծանուցում ստանալուց հետո (Պաշտոնատար անձանց և/կամ բուժանձնակազմի հրահանգ) անհրաժեշտ է օգտագործել «ՋԳՕՆ» հակառադիացիոն փաթեթը: Այստեղ առկա կալիումի յոդիդը 125 մգ (KI 125 mg) նախատեսված է ճառագայթային աղետների ժամանակ՝ վահանաձև գեղձը պաշտպանելու համար և այն չի թիրախավորում մարդու մարմնի մյուս օրգաններն ու հյուսվածքները: Օգտագործման եղանակը մանրա- մասնորեն նկարագրված է հակառադիացիոն փաթեթին կից ներդիր թերթիկում:

Նաև, ճառագայթային հիվանդությունն արդյունավետ կանխելու համար խորհուրդ է տրվում օգտագործել սև հաղարջ և չիչխան, որոնք ընդունակ են օրգանիզմից հեռացնել ռադիոնուկլիդները: Իսկ մասուրի կամ հապալասի թուրմն օգնում է օրգանիզմից հեռացնել ցեզիումը և ստրոնցիումը:




«ՋԳՕՆ»
հակառադիացիոն
փաթեթ

## ՀԵՏԵՎԵԼ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՆ




1. Պատսպարման վայրերից դուրս գալ հեռուստատեսության, ռադիոյի, շարժական բարձրախոս սարքավորումների և այլ միջոցով ռադիոակտիվ աղտոտված գոտում գործելակերպի կանոնների մասին տեղեկատվությունը ստանալուց հետո:

2. Պատսպարման վայրերից դուրս գալուց վերցնել «ՋԳՕՆ» տագնապի պայուսակը և մոտենալ այն տրանսպորտային միջոցներին, որոնք նախատեսված են տարհանման համար կամ սեփական տրանսպորտով մեկնել տեղեկատվության աղբյուրների կողմից նշված հավաքակայան:

3. Պատսպարման վայրերից դուրս գալուց հետո դռներին փակցնել պաստառներ հետևյալ գրությամբ՝ «ներսում մարդ չկա»:

4. Տարհանման ժամանակ արտահագուստին ամրացնել պիտակ՝ յոդի ընդունման մասին:

Հաստատված է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից

Ուղեցույցը ստեղծված է ՋԳՕՆ ՍՊԸ կողմից:
ՑՁԷՆ հաղորդակցությունների հանգույցի աջակցությամբ:

# IF A RADIATION EMERGENCY OCCURS, WHAT SHOULD I DO?

After receiving a message through the means of notification of a possible radiation hazard, the public is advised to do the following:

1. Get inside
2. Stay inside
3. Stay Tuned




## GET INSIDE



1. If you are outside during a radiation emergency, immediately protect the respiratory system with available personal protective equipment, respirators, cotton gauze bandages. In case of their absence, by improvised means, such as handkerchiefs, scarves or other fabric products.



2. Try not to walk on grassy plains, not to put suitcases and other luggage on the ground, do not sit down or touch things on the ground.



3. Hurry up to take shelter in protective structures, office buildings, administrative buildings, apartments, where the signal caught you. Get to the middle of the building or a basement, away from doors and windows.



4. If you are in a car, bus, or other vehicle during a radiation emergency, get inside a building right away. Cars do not provide good protection from radioactive material.



5. If you have pets bring pets inside with you, if you can.

## STAY INSIDE

1. Once in the shelter, take off all outerwear and shoes. Put them in a plastic bag and take a shower or at least wipe the exposed areas of the body with a wet wipe.



2. Close all windows and doors, turn off the ventilation and turn on the TV or radio. Staying inside for at least 24 hours can protect you until it is safe to leave the area.

3. If possible, make a supply of clean drinking water for 2-3 days, in a closed container with a volume of at least 2 liters per person. Place the available food in plastic bags or resealable containers for food and put them in the refrigerator or cupboard.

4. Do only wet cleaning of the premises, including before cooking and eating food directly.

### HOW TO PROTECT YOURSELF FROM EXPOSURE TO RADIOACTIVE IODINE?

The most effective remedy is the ingestion of medicines containing stable iodine, such as potassium iodide. Only after notification (the command of Officials and/or Medical staff), it is necessary to use the anti-radiation kit "ZGON". Potassium iodide (KI 125 mg ) is considered to be in use during radiation disasters in order to protect the thyroid gland and it does not insulate the other organ and tissues of human body. Detailed instructions are attached to the kit.

Also, in order to effectively prevent radiation sickness, it is recommended to use black currant and sea buckthorn, which are capable of removing radionuclides from the body. And an infusion of rosehip or blueberry helps to eliminate cesium and strontium from the body.



anti-radiation kit "ZGON"

## STAY TUNED

1. Go out of shelters after receiving information about the rules of conduct in a radioactively contaminated zone via television, radio, portable speaker equipment, etc.

2. After leaving the shelter, take the disaster package and approach the vehicles that are intended for evacuation or leave in your own vehicle to the meeting point indicated by the information sources.

3. After leaving the shelters, put posters on the doors with the following inscription: "nobody inside".

4. During evacuation, attach an iodine supplement label to your outer clothing.

Approved by Crisis Management State Academy
of The Ministry of Emergency Situations
of the Republic of Armenia

Guide created by ZGON LLC.
With the support of 9ZEN communication hub